ԱԼԲԵՐՏ ԲԱԶԵՅԱՆ

Ծնվել է 1956թ., Կամոյի շրջանի (այժմ՝ Գավառ) Լանջաղբյուր գյուղում: Ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո 1978-1993թթ. աշխատել է սպորտի և մանկավարժության բնագավառում՝ որպես մարզիչ, դասախոս, ապա՝ գիտաշխատող: 1984թ. Մոսկվայում ավարտել է ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել թեկնածուական թեզ: Մանկավարժական գիտությունների թեկնածու է:
1989 թվականից մասնակցել է Արցախի և ՀՀ սահմանամերձ շրջանների պաշտպանությանը, պարգևատրվել <<Մարտական խաչ>> երկրորդ աստիճանի շքանշանով: 1993-1994թթ. աշխատել է ՀՀ պաշտպանության նախարարությունում՝ որպես վարչության պետ: 1996թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, ղեկավարել է ԱԺ <<Երկրապահ>> պատգամավորական խումբը:1998թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ, երկրորդ անգամ ընտրվել է 1999թ. հունիսին: 1999թ. օգոստոսից մինչև 2001թ. հունվարը եղել է Երևանի քաղաքապետ: